

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2008 թվականի դեկտեմբերի 12-ի

ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՔՎՈՏԱՆԵՐԸ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԵԽԱՆԻՉՄԻ ՄԱՍԻՆ

(2013 թվականի հունիսի 21-ի Արձանագրության խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր, տնտեսական ինտեգրումը խորացնելուն եւ բարեխիղճ մրցակցություն իրականացնելուն օժանդակելու նպատակով,

առաջնորդվելով միջազգային առեստրի համընդհանուր ճանաչված նորմերով եւ կանոններով,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

### Հոդված 1

Սույն Համաձայնագրում գործածվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

**նույնանման ապրանք՝** ապրանք, որն իր գործառական նշանակությամբ, կիրառությամբ, որակական եւ տեխնիկական հատկանիշներով ամբողջությամբ նույնն է սակագնային քվոտայի շրջանակներում միասնական մաքսային տարածք ներմուծվող՝ ապրանքի հետ կամ (ամբողջությամբ նույնը այդպիսի ապրանքի բացակայության դեպքում) այն ապրանքի հետ, որն ունի սակագնային քվոտայի շրջանակներում միասնական մաքսային տարածք ներմուծվող ապրանքի հատկանիշներին մոտ հատկանիշներ, որոնք հնարավորություն են տալիս այդ ապրանքն օգտագործելու սակագնային քվոտայի շրջանակներում միասնական մաքսային տարածք ներմուծվող ապրանքի գործառական նշանակությանը նույնանման նշանակությամբ, եւ որը առեստրային տեսանկյունից կարելի է փոխարինել նշված ապրանքով,

**ներմուծման մաքսատուրք՝** պարտադիր վճար, որը գանձվում է մաքսային մարմինների կողմից միասնական մաքսային տարածք ապրանքներ ներմուծելու դեպքում,

**միասնական մաքսային տարածք՝** Կողմ հանդիսացող պետությունների մաքսային տարածքներից բաղկացած տարածք,

արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկ՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ, որը հիմնված է Համաշխարհային մաքսային կազմակերպության՝ ապրանքների նկարագրման եւ ծածկագրման ներդաշնակեցված համակարգի վրա,

**միասնական մաքսային սակագին՝** երրորդ երկրներից միասնական մաքսային տարածք ներմուծվող ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսատուրքերի դրույքաչափերի ամբողջություն, որը համակարգված է Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան,

**ապրանքի ներմուծում՝** ապրանքի ներսւբերումը Կողմ հանդիսացող պետության մաքսային տարածք կամ միասնական մաքսային տարածք երրորդ երկրների մաքսային տարածքներից՝ առանց հետադարձ դուրս հանելու պարտավորության,

**լիցենզիա՝** ապրանքների արտահանումը եւ (կամ) ներմուծումն իրականացնելու իրավունքը հավաստող հատուկ փաստաթուղթ,

**նախորդող ժամանակահատված՝** ժամանակահատված, որի հիման վրա կատարվում է միասնական մաքսային տարածքում գյուղատնտեսական ապրանքների սպառման ծավալների եւ միասնական մաքսային տարածքում նույնանման ապրանքների արտադրության ծավալների վերլուծություն,

**գյուղատնտեսական ապրանքներ՝** ապրանքներ, որոնք դասվում են Համաշխարհային մաքսային կազմակերպության՝ ապրանքների նկարագրման եւ ծածկագրման ներդաշնակեցված համակարգի 1-24-րդ խմբերին, ինչպես նա եւ այնպիսի ապրանքներ, ինչպիսիք են մաննիտը, D-գլյուցիտը (սորբիտ), եթերայուղերը, կազեինը, ալբումինները, դոնդոլանյութը, դեքստրինները, մոդիֆիկացված (փոփոխված) օսլաները, սորբիտը, մորթիները, կաշին, մուշտակամորթեղենի հումքը, հումք-մետաքսը, մետաքսի թափոնները, կենդանիների բուրդը, բամբակի հումքը/ընդավոր բամբակը, բամբակի թափոնները, բամբակի մանրաթելը գզած, հում վուշը եւ չմշակված կանեփաթելը

**ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ՝** ներմուծման մաքսատուրքի չափ (մեծություն), սակագնային քվոտա՝ երրորդ երկրների ծագման գյուղատնտեսական ապրանքների առանձին տեսակների՝ միասնական մաքսային տարածք ներմուծումը կարգավորող միջոց, որով

նախատեսվում է որոշակի ժամանակահատվածի ընթացքում կիրառել ներմուծման մաքսատուրքի ավելի ցածր դրույքաչափի որոշակի քանակով ապրանքների ներմուծման դեպքում (բնաիրային կամ արժեքային արտահայտությամբ)՝ Միասնական մաքսային սակագնին համապատասխան կիրառվող ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի համեմատ,

**Երրորդ երկրներ՝** սույն Համաձայնագրի կողմ չհանդիսացող պետություններ,

**գործադիր իշխանության լիազորված պետական մարմին՝** Կողմ հանդիսացող պետության գործադիր իշխանության մարմին, որն օժտված է լիցենզիա տրամադրելու իրավասությամբ,

**արտաքին առևտրային գործունեության մասնակիցներ՝** իրավաբանական անձինք, ինչպես նա եւ իրավաբանական անձ չհանդիսացող այն կազմակերպությունները, որոնք գրանցված են Կողմ հանդիսացող պետություններից որեւէ մեկում եւ ստեղծվել են այդ պետության օրենսդրությանը համապատասխան, ինչպես նա եւ այն ֆիզիկական անձինք, որոնց մշտապես կամ առավելապես բնակվելու վայրը Կողմ հանդիսացող պետություններից մեկի տարածքում է, այդ պետության քաղաքացի են կամ մշտական բնակության իրավունք ունեն այնտեղ կամ գրանցված են այնտեղ որպես անհատ ձեռնարկատերեր՝ այդ պետության օրենսդրությանը համապատասխան:

## **Հոդված 2**

1. Երրորդ երկրների ծագման գյուղատնտեսական ապրանքների՝ միասնական մաքսային տարածք ներմուծման կարգավորումն իրականացնելիս թույլատրվում է տրամադրել արտոնություններ (պրեֆերենցիաներ)՝ սակագնային քվոտաներ սահմանելով դրանց ներմուծման համար, եթե նույնանման ապրանքներն արտադրվում են (արդյունահանվում են, աճեցվում են) միասնական մաքսային տարածքում:

2. Սույն Հոդվածի 1-ին կետում նշված այն գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ, որոնք միասնական մաքսային տարածք են ներմուծվում սահմանված քանակից (քվոտայից) ավելի մեծ քանակությամբ, կիրառվում են ներմուծման մաքսատուրքեր՝ Միասնական մաքսային սակագնին համապատասխան:

## **Հոդված 3**

1. Սակագնային քվոտաները գյուղատնտեսական ապրանքների արտոնյալ ներմուծման նկատմամբ սահմանում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ «Հանձնաժողով»)՝ սկսած Միասնական մաքսային սակագինը կիրառելու իրավասությունները

Կողմերի կողմից իրեն վերապահելու օրվանից՝ շուկայի պահանջները բավարարելու, գյուղատնտեսական արտադրությունը խթանելու եւ միջազգային առեւտրի զարգացմանը նպաստելու նպատակով:

*(2013 թվականի հունիսի 21-ի Արձանագրության խմբագրությամբ)*

2. Միասնական մաքսային տարածք ապրանքի ներմուծման նկատմամբ Հանձնաժողովի կողմից սահմանվող սակագնային քվոտայի ծավալը չի կարող գերազանցել միասնական մաքսային տարածքում նման ապրանքի սպառման եւ միասնական մաքսային տարածքում նույնանման ապրանքի արտադրության ծավալների տարբերությունը: Ընդ որում, եթե Կողմերից մեկի պետության առումով նույնանման ապրանքի արտադրության ծավալը հավասար է դրա սպառման ծավալին կամ գերազանցում է այն, ապա նման տարբերությունը կարող է հաշվի չառնվել՝ միասնական մաքսային տարածքի համար սակագնային քվոտայի ծավալը հաշվարկելիս:

3. Եթե նույնանման ապրանքի արտադրության ծավալը հավասար է միասնական մաքսային տարածքում դրա սպառման ծավալին կամ գերազանցում է այն, ապա չի թույլատրվում սակագնային քվոտա սահմանել:

4. Սակագնային քվոտայի շրջանակներում միասնական մաքսային տարածք ներմուծվող գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը սահմանում է Հանձնաժողովը՝ սկսած միասնական մաքսային սակագինը կիրառելու իրավասությունները Կողմերի կողմից իրեն վերապահելու օրվանից:

#### **Հոդված 4**

1. Հանձնաժողովը սակագնային քվոտայի ծավալը Կողմ հանդիսացող պետությունների միջ եւ բաշխում է Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետությունում արտադրության եւ սպառման ծավալների այն տարբերության սահմաններում, որը հաշվի էր առնվել միասնական մաքսային տարածքի համար սակագնային քվոտայի ծավալը հաշվարկելիս՝ սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածին համապատասխան: Ընդ որում, Հանձնաժողովի որոշման համաձայն, Հանձնաժողովը կամ Կողմերը սահմանում են արտաքին առեւտրային գործունեության մասնակիցների միջ եւ սակագնային քվոտան բաշխելու մեթոդը եւ կարգը, ինչպես նա եւ, անհրաժեշտության դեպքում, բաշխում են սակագնային քվոտան երրորդ երկրների միջեւ:

*(1-ին կետը՝ 2013 թվականի հունիսի 21-ի Արձանագրության խմբագրությամբ)*

2. Ազատ շրջանառության նպատակով սակագնային քվոտաների շրջանակներում միասնական մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մաքսային ձեակերպումներն իրականացվում են Կողմ հանդիսացող այն պետությունում, որտեղ արտաքին առևտրային գործունեության մասնակցին հատկացվել է սակագնային քվոտան: Ընդ որում, Կողմ հանդիսացող այդ պետության գործադիր իշխանության պետական լիազոր մարմնի կողմից տրամադրված լիցենզիայի առկայությունն անհրաժեշտ պայման է նման ապրանքների ներմուծման համար :

3. Լիցենզիաների տրամադրումն իրականացվում է արտաքին տնտեսական գործունեության այն մասնակիցների հայտերի հիման վրա, որոնց քվոտաներ են հատկացվել:

### **Հոդված 5**

Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջ եւ սակագնային քվոտայի բաշխումը հիմնված է քվոտա ստանալու առումով նրանց իրավահավասարության վրա եւ սեփականության ձեւի հատկանիշների, գրանցման վայրի կամ շուկայում ունեցած դիրքի հիմքով խտրականության բացառման վրա:

### **Հոդված 6**

Հանձնաժողովը գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ սակագնային քվոտա կիրառելու մասին որոշում ընդունելիս պահպանում է հետեւյալ դրույթները.

ա) սակագնային քվոտայի սահմանում (անկախ դրա՝ երրորդ երկրների միջ եւ բաշխվելու հանգամանքից) որոշակի ժամկետով,

բ) բոլոր շահագրգիռ երրորդ երկրներին՝ իրենց հատկացված սակագնային քվոտայի ծավալի մասին տեղեկացում այն դեպքում, երբ սակագնային քվոտան բաշխվում է երրորդ երկրների միջ եւ,

գ) տեղեկությունների հրապարակում սակագնային քվոտայի կիրառման, դրա ծավալի եւ գործողության ժամկետի, սակագնային քվոտայի շրջանակներում ներմուծվող ապրանքների նկատմամբ սահմանվող ներմուծման մաքսատուրքի դրույքաչափերի, ինչպես նա եւ երրորդ երկրների միջ եւ դրա բաշխման մասին:

## Հոդված 7

1. Սակագնային քվոտայի բաշխումը երրորդ երկրների միջ եւ, եթե Հանձնաժողովը նման որոշում է ընդունել, որպես կանոն, իրականացվում է Հանձնաժողովի կողմից՝ երրորդ երկրների բոլոր հիմնական մատակարարների հետ խորհրդակցության արդյունքների հիման վրա:

2. Սույն հոդվածում «երրորդ երկրներից հիմնական մատակարարներ» նշանակում է այն մատակարարները, որոնք գյուղատնտեսական ապրանքների՝ միասնական մաքսային տարածք ներմուծումից 10 տոկոս եւ ավելի բաժին ունեն:

3. Այն դեպքում, երբ սակագնային քվոտայի բաշխումը չի կարող իրականացվել երրորդ երկրների բոլոր հիմնական մատակարարների հետ խորհրդակցության արդյունքների հիման վրա, երրորդ երկրների միջ եւ սակագնային քվոտայի բաշխման մասին որոշումը պետք է կայացնի Հանձնաժողովը՝ հաշվի առնելով նախորդող ժամանակահատվածում այդ երկրներից գյուղատնտեսական ապրանքի մատակարարման ծավալը:

4. Հանձնաժողովի չի սահմանում որեւէ այնպիսի պայման կամ ձեւական պահանջ, որը կարող է խոչընդոտել՝ ցանկացած երրորդ երկրի կողմից իրեն հատկացված սակագնային քվոտան ամբողջությամբ օգտագործելը՝ պայմանով, որ գյուղատնտեսական ապրանքի մատակարարումը կիրականացվի սակագնային քվոտայի գործողության ժամկետում:

5. Նախորդող ժամանակահատվածի ընտրությունն այն գյուղատնտեսական ապրանքի առնչությամբ, որի նկատմամբ սահմանվում է սակագնային քվոտան, իրականացվում է Հանձնաժողովի կողմից: Ընդ որում, որպես կանոն, նման նախորդող ժամանակահատված է համարվում ցանկացած նախորդող երեք տարին, որի առնչությամբ հասանելի են ներմուծման իրական ծավալներն արտացոլող տեղեկություններ: Նման նախորդող ժամանակահատված ընտրելու հնարավորության բացակայության դեպքում սակագնային քվոտան բաշխվում է ներմուծման իրական ծավալի առավել հավանական բաշխումը գնահատելու հիման վրա:

6. Սույն հոդվածում «ներմուծման իրական ծավալ» նշանակում է ներմուծման ծավալ՝ դրա սահմանափակումների բացակայության պայմաններում:

7. Գյուղատնտեսական ապրանքներ մատակարարելու մեջ շահագրգռված ցանկացած երրորդ երկրից հայտ ստանալու դեպքում Հանձնաժողովը պետք է խորհրդակցություն անցկացնի.

ա) սահմանված սակագնային քվոտան վերաբաշխելու անհրաժեշտության վերաբերյալ,

բ) ընտրված նախորդող ժամանակահատվածը փոփոխելու վերաբերյալ,

գ) սակագնային քվոտան բաշխելու կամ այն անսահմանափակ օգտագործելու նկատմամբ միակողմանիորեն սահմանված պայմանները, ձեական պահանջները կամ ցանկացած այլ դրույթ վերացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

## **Հոդված 8**

1. Գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ սակագնային քվոտաներ կիրառելու առումով՝ Հանձնաժողովը պետք է.

ա) գյուղատնտեսական ապրանք մատակարարելու մեջ հետաքրքրված երրորդ երկրի պահանջով տեղեկություններ տրամադրի սակագնային քվոտան բաշխելու կարգի, արտաքին տնտեսական գործունեության այն մասնակիցների միջ եւ բաշխելու մեխանիզմի եւ այն սակագնային քվոտայի ծավալի վերաբերյալ, որի համար տրամադրված են լիցենզիաները,

բ) տեղեկություններ հրապարակի այն գյուղատնտեսական ապրանքի ընդհանուր քանակի կամ արժեքի վերաբերյալ, որի ներմուծումը կթույլատրվի ապագա որոշակի ժամանակահատվածի ընթացքում, ինչպես նա եւ տեղեկություններ սակագնային քվոտայի գործողության ժամկետի սկզբի եւ ավարտի ամսաթվերի ու դրանց ցանկացած փոփոխության մասին:

2. Բացի սակագնային քվոտան երրորդ երկրների միջ եւ բաշխելու դեպքերից՝ Հանձնաժողովն իրավասու չէ պահանջելու, որ լիցենզիաներն օգտագործվեն որեւէ առանձին երրորդ երկրից գյուղատնտեսական ապրանք ներմուծելու համար:

## **Հոդված 9**

Կողմերի միջ եւ սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են շահագրգիռ Կողմերի խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, ցանկացած շահագրգիռ Կողմի նախաձեռնությամբ այն փոխանցվում է Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

## Հոդված 10

Սույն Համաձայնագրում Կողմերի համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

## Հոդված 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրային բազայի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի արձանագրությամբ:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2008 թվականի դեկտեմբերի 12-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է ավանդապահի մոտ, որը Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրման հարցերով կոմիտեն է՝ նախքան Հանձնաժողովին ավանդապահի գործառույթները փոխանցելը:

Ավանդապահը յուրաքանչյուր Կողմի ուղարկում է սույն Արձանագրության հաստատված պատճենը:

Բելառուսի  
Հանրապետության  
Կառավարության կողմից

(ստորագրություն)

Ղազախստանի  
Հանրապետության  
Կառավարության կողմից

(ստորագրություն)

Ռուսաստանի  
Դաշնության  
Կառավարության կողմից

(ստորագրություն)